



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Ի Վ 13

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝
2021 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18 - ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԿԱԶՄՈՎ ՆԻՍՏԻ**

Օրակարգում՝

1. Հանդիպում ԵՊՀ ռեկտորի ժ/պ. Հ. Հովհաննիսյանի հետ:
2. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտական խորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը շնորհակալություն հայտնեց պարոն Հ. Հովհաննիսյանին հանդիպման համար՝ հույս հայտնելով, որ ներկաները կստանան իրենց հուզող հարցերի պատասխանները: Այնուհետև ռեկտորի ժ/պ. պարոն Հ. Հովհաննիսյանը ողջունեց ներկաներին և տեղեկացրեց, որ պաշտոնավարման այս կարճ ժամանակահատվածում հասցրել է ծանոթանալ ԵՊՀ շատ հիմնախնդիրների և այսօր հայ բանասիրության ֆակուլտետում եզրափակում է այս ձևաչափով իր նախաձեռնած հանդիպումների շարքը: Հ. Հովհաննիսյանը կիսվեց իր պատկերացումների ու անելիքի մասին: Նա կարևորեց համալսարանում տիրող հանգիստ մթնոլորտը, որը նպաստում է ուսումնական որակի բարելավմանը և գիտահետազոտական գործընթացների խթանմանը: Իր խոսքում նա նշեց, որ համալսարանը պետք է ունենա

բարձր հեղինակություն և վարկանիշ, լինի ապաքաղաքական և ապակուսակցական: Նա կարևորեց նաև այն հանգամանքը, որ մոտ ժամանակներում համալսարանականներին ներկայացվելու են առողջապահական նոր փաթեթներ, որոնք իրենցմեջ շատ ավելի մեծ հնարավորություններ կպարունակեն: Չափազանց մեծ կարևորություն է տրվելու համալսարանի գիտահետազոտական դաշտին, որպեսզի բարձրացվի համալսարանի տեսանելիությունը միջազգային մակարդակով: SWAT -ի միջոցով վեր են լուծվում այն թերացումներն ու բացթողումները, որոնք պետք է վերափոխել ու բարելավել: Դա էլ իր հերթին նշանակում է, որ համալսարանականները պետք է ավելի ակտիվ լինեն միջազգային ամսագրերում հոդվածներ տպելու հարցում, ինչն էլ, ինքնըստինքյան, ավելի կբարձրացնի համալսարանի վարկանիշը և ԵՊՀ-ի տեսանելիությունը միջազգային հարթակներում: Նա ասաց, որ արդեն զբաղվում են արտերկրից ուսանողներ հավաքագրելու գործընթացով, նշեց նաև ֆարմացիայի ինստիտուտի հետ կապված ակնկալվող բարեփոխումները, որոնք համալսարանին օգուտ և ավելի մեծ հնարավորություններ ու ճանաչում են բերելու: Նա հավելեց, որ պետք է զբաղվեն ԵՊՀ –ի հանգստյան տների խնդիրներով, ինչպես նաև ներկայացրեց համալսարանի ներկայիս ֆինանսական վիճակը և սպասվելիք անելիքները:

Պարոն Հ. Հովհաննիսյանը կարևորեց այն հանգամանքը, որը ԵՊՀ-ն պետք է ունենա անձեռնմխելի կապիտալ, ինչը ավելի կնպաստի ԵՊՀ-ի ֆինանսական հարցերի կայունացմանը և այլ ֆինանսական գործընթացների ավելի արդյունավետ իրագործմանը: Նրա խոսքով դասախոսները պարտավոր են ուսանողներին ապահովել բոլոր նյութերով e-learning հարթակում: Հ. Հովհաննիսյանը անդրադարձավ նաև ուսանողների առաջադիմությանն առնչվող հարցերին: Նրա խոսքով՝ ԵՊՀ-ն պետք է ունենա պարկեշտ ուսանողներ, և նշեց, որ ուսանողների ոչ պարկեշտ վարքը և վատ առաջադիմությունը պետք է հիմք դառնա ուսանողի՝ ԵՊՀ-ից հեռացվելուն: Նա նաև սահիկաշարի միջոցով դասախոսական կազմին ներկայացրեց հայ բանասիրության ֆակուլտետի ցուցանիշների համակարգված վերլուծությունը՝

ներկաների ուշադրությունը հրավիրելով հատկապես միջազգային ամսագրերում տպագրվող հոդվածներին:

Պարոն Հ. Հովհաննիսյանը նաև առանձնացրեց, որ ԵՊՀ վարչությունների և աշխատակիցների գործունեությունը պետք է վերանայվի՝ ավելի համակարգված դարձնելու ակնկալիքով: Անդրադարձ կատարվեց նաև Կիևյան փողոցում գտնվող ԵՊՀ մասնաշենքին՝ հույս հայտնելով, որ մոտակա ժամանակամիջոցում կկարողանան անհրաժեշտ ֆինանսական միջոցներ ներգրավելով վերանորոգել շենքը և հետագայում հիմնադրել դպրոց: Անդրադարձ կատարվեց նաև Ծաղկաձորի հանգստյան տանը, որտեղ պետք է լողավազան կառուցվի, որից զինը մի փոքր կբարձրանա, բայց ընդհանուր առումով կպահպանվի ծառայությունների որակը և մատչելիությունը:

Այնուհետև պարոն Հ. Հովհաննիսյանը պատասխանեց ներկաների հարցերին: Պատասխանելով հայոց լեզվի ամբիոնի վարիչ, պրոֆ. Յու. Ավետիսյանի հարցին՝ Հ. Հովհաննիսյանը նշեց, որ բոլոր դրական նախաձեռնությունները խրախուսվելու են, ԵՊՀ – ին օգուտ և հեղինակություն բերող բոլոր ծրագրերը օժանդակվելու են ԵՊՀ ղեկավարության կողմից: Անդրադառնալով ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ, դոց. Վ. Պետրոսյանի մտահոգությանը՝ կապված հայագիտության ոլորտում միջազգային ամսագրերի պակասին՝ պարոն Հ. Հովհաննիսյանը վստահեցրեց, որ այդ ուղղությամբ արդեն աշխատում են՝ հույս հայտնելով, որ առաջիկայում խնդիրը կկարգավորվի:

Պարոն Հ. Հովհաննիսյանը պատասխանեց նաև դոց., դոց. Ն. Դիլբարյանի, Ա. Տեր – Մինասյանի, Փ. Մեյթիխանյանի, Ա. Ջրբաշյանի հարցերին:

Պարոն Հ. Հովհաննիսյանը ժամանակի սղության պատճառով նաև որոշ հարցերի չանդրադարձավ՝ հավելելով, որ առաջիկայում դեկանի հաշվետվություն է լինելու և այդ ժամանակ ավելի շատ հնարավորություն կունենա հարց ու պատասխանի միջոցով անդրադառնալու ֆակուլտետին հուզող հարցերին :

Ընթացիկ հարցերում քննարկվեցին.

ա/ **Լ Ս Ե Ց Ի Ն** - Հայ բանասիրության ֆակուլտետի մագիստրատուրայի առկա ուսուցման «Հայ գրականություն» մագիստրոսական ծրագրի երկրորդ կուրսի ուսանող Սամվել Վարդանի Եղիազարյանին «Լավագույն ուսանող» ամենամյա մրցույթին մասնակցելու երաշխավորության հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը, Ա. Աբաջյանը, դոց. դոց. Ա. Ջրբաջյանը, Վ. Պետրոսյանը, Ա. Սարգսյանը, Վ. Եղիազարյանը և ուրիշներ:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Հայ բանասիրության ֆակուլտետի մագիստրատուրայի առկա ուսուցման «Հայ գրականություն» մագիստրոսական ծրագրի երկրորդ կուրսի ուսանող Սամվել Վարդանի Եղիազարյանին երաշխավորել մասնակցելու «Լավագույն ուսանող» ամենամյա մրցույթին:

բ/ **Լ Ս Ե Ց Ի Ն** - Հայ բանասիրության ֆակուլտետի մագիստրատուրայի առկա ուսուցման «Հայ նորագույն գրականություն և գրաքննադատություն» մագիստրոսական ծրագրի երկրորդ կուրսի ուսանողուհի Էմմա Վարդանի Գրիգորյանին «Լավագույն ուսանող» ամենամյա մրցույթին մասնակցելու երաշխավորության հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը, Ա. Աբաջյանը, դոց. դոց. Ա. Ջրբաջյանը, Վ. Պետրոսյանը, Ա. Սարգսյանը, Վ. Եղիազարյանը և ուրիշներ:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն – Հայ բանասիրության ֆակուլտետի մագիստրատուրայի առկա ուսուցման «Հայ նորագույն գրականություն և գրաքննադատություն» մագիստրոսական ծրագրի երկրորդ կուրսի ուսանողուհի Էմմա Վարդանի Գրիգորյանին երաշխավորել մասնակցելու «Լավագույն ուսանող» ամենամյա մրցույթին:

ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝
ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝**

**ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ
ԴՈՑ. Ա. ԳԱԼՍՅԱՆ**